***Նախագիծ***

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2026 թվականի -ի թիվ -Ն որոշմամբ

**ՁԵՎ**

**«««ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է XML սխեմայի ձևաչափով՝ պահպանելով ստորև սահմանված պահանջները:

| **Կետ** | **Անվանում** | **Տիպ** | **Նիշերի քանակ** | **Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության դաշտեր** | **Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվության դաշտեր** | **Լրացման կարգ** | **Հաշվետվության XML սխեմայում դաշտի անվանում** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. * | Հաշվետվության տեսակը | բաժին | | Այո | Այո | Ընտրվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը կամ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը: | report_crypto / report_crypto _str |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2. * | Հաշվետվության անվանումը | բաժին | | Այո | Այո | | report_name |
| 3. * | Հաշվառման համարը | թիվ | 8 | Այո | Այո | Լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը: | fmcrn |
| 4. * | Ուղարկման ամսաթիվը | տեքստ | 6 | Այո | Այո | Լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին՝ ddmmyy տեսքով՝<br>dd-օր, mm-ամիս, yy-տարի: | sent_date |
| 5. * | Հերթական համարը | տեքստ | 4 | Այո | Այո | Լրացվում է հաշվետվության հերթական համարը՝ տվյալ օրվա դրությամբ (օրինակ՝ տվյալ օրվա առաջին հաշվետվության հերթական համարը կլինի՝ 0001): | seq_number |
| 6. | Ուղղման կամ լրացման հերթական համարը | թիվ | 1- 3 | Այո | Այո | Լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը:<br>Ենթակա է պարտադիր լրացման, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ ճշտման նպատակով, ինչպես նաև գործարքի պայմանի փոփոխության կամ այն դեպքում, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն: | error_code |
| 7. | Ուղղման կամ լրացման պատճառը | տեքստ | մինչև 1000 | Այո | Այո | Լրացվում են ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները: Ենթակա է պարտադիր լրացման, եթե 6-րդ կետում լրացվել է ուղղման կամ լրացման հերթական համարը: | error_reason |
| 8. * | Գործարքի կամ գործարար հարաբերության նկարագրությունը | բաժին | | Այո | Այո | Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել, կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, ապա՝ 9-րդ կետում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ գործարքի մերժման կամ գործարար հարաբերության դադարեցման դեպքում՝ գործարքի մերժման կամ գործարար հարաբերության դադարեցման օրը, ամիսը, տարին, 10-11-րդ և 23-28-րդ կետերը չեն լրացվում,12-13-րդ, 20-23-րդ կետերում լրացվում է 0: «Պայմանագրի | transaction_description |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | տեսակները» դաշտում «Նվիրատվության պայմանագիր», «Փոխանակման պայմանագիր» կամ «Ժառանգություն» ընտրելու դեպքում 12-րդ կետում լրացվում է 0: | |
| 9. * | Կատարման կամ հաստատման ամսաթիվը | Ամսաթիվ | 10 | Այո | Այո | Լրացվում է տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման տարին՝ 4-նիշ, ամիսը՝ 2-նիշ, օրը՝ 2-նիշ (yyyy-mm-dd): Գործարքի կատարման ամսաթիվ է համարվում գործարքի գումարի փոխանցման ամսաթիվը: Այն դեպքում, երբ գործարքը արժույթի փոխանցում չի ենթադրում, գործարքի կատարման ամսաթիվ է համարվում կիրպտոակտիվի փաստացի փոխանցման ամսաթիվը: | trans_date |
| 10. | Արժույթը | տեքստ | 3 | Այո | Այո | Լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 1 ցանկից: Ենթակա է պարտադիր լրացման այն դեպքում, երբ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում նշվել է «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով» կամ «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով այլանձի օգտին», ընդ որում նշված՝ դեպքերում լրացվում է ֆինանսական հաստատության կողմից վաճառված արժույթը: | currency |
| 11. | Կրիպտոակտիվը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է այն կրիպտոակտիվը, որով կատարվել է գործարքը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 2 ցանկից: Ենթակա է պարտադիր լրացման այն դեպքում, երբ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում նշվել է «Կրիպտոակտիվի առք արժույթով», «Կրիպտոակտիվի առք արժույթով այլ անձի կողմից», «Կրիպտոակտիվի փոխարկում կրիպտոակտիվի», «Կրիպտոակտիվի փոխանցում», «Պահառուական հաշիվների միջև փոխանցում», «Կրիպտոակտիվի ստացում», գործարքի տեսակները:<br>Այն դեպքում, երբ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում նշվել է «Կրիպտոակտիվի փոխարկում կրիպտոակտիվի», «Կրիպտոակտիվի առք արժույթով» «Կրիպտոակտիվի առք արժույթով այլ անձի կողմից», | crypto_currency |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | «Կրիպտոակտիվի փոխարկում կրիպտոակտիվի» ապա «Կրիպտոակտիվը» դաշտում լրացվում է ֆինանսական հաստատության կողմից վաճառված կրիպտոակտիվը: | |
| 12.* | Գումարը տվյալ արժույթով /կրիպտոակտիվով | թիվ | մինչև 19 | Այո | Այո | Լրացվում է գործարքի գումարի չափն այն արժույթով/կրիպտոակտիվով, որով կատարվել է գործարքը: | amount |
| 13. * | Գումարը համարժեք ՀՀ դրամին | թիվ | մինչև 19 | Այո | Այո | Լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով, ընդ որում՝ կրիպտոակտիվով իրականացված գործարքի դեպքում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված բորսաների կողմից ԱՄՆ դոլարով կամ եվրոյով հրապարակված կրիպտոակտիվի գնի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Եթե «Արժույթը» դաշտում լրացվում է ՀՀ դրամ, ապա «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում լրացվում է նախորդ դաշտում լրացված գումարը:<br>Այն դեպքում, երբ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում նշվել է «Կրիպտոակտիվի փոխարկում կրիպտոակտիվի», ապա «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում լրացվում է ֆինանսական հաստատության կողմից գնված կրիպտոակտիվին համարժեք գումարի դրամական արտահայտությունը:<br>Այն դեպքում, երբ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում նշվել է «Կրիպտոակտիվի առք արժույթով», «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով», «Կրիպտոակտիվի առք արժույթով այլ անձի կողմից», «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով այլ անձի օգտին», ապա «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում լրացվում է ֆինանսական հաստատության կողմից գնված կրիպտոակտիվին/արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը, | amount_amd |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | որը հաշվարկվում է կրիպտոակտիվի դեպքում դրա ձեռք բերման, ստացման (այդ թվում՝ անհատույց) օրվա դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված բորսաներից ՀՀ կառավարության սահմանած կարգով որոշված բորսայի կողմից ԱՄՆ դոլարով կամ եվրոյով հրապարակված կրիպտոակտիվի գնի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, իսկ արտարժույթի դեպքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:<br>Այն դեպքում, երբ կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձի կողմից վաճառվել է ՀՀ դրամ, և գնվել է կրիպտոակտիվ, ապա «Գումարը տվյալ կրիպտոակտիվով» դաշտում ներկայացվում է գործարքի գումարը ՀՀ դրամով (վաճառված արժույթով). գործարքի կատարման նույն գումարը լրացվում է նաև «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում:<br>Այն դեպքում, երբ կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձի կողմից վաճառվել է կրիպտոակտիվ, և գնվել է ՀՀ դրամ, ապա «Գումարը տվյալ կրիպտոակտիվով» դաշտում ներկայացվում է գործարքի գումարը կրիպտոակտիվով (վաճառված արժույթով), իսկ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում ներկայացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: | |
| 14. | Գործարքի հեշը (գործարքի նույնականացուցիչ համար) | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է գործարքի հեշը: Ենթակա է պարտադիր լրացման գործարքի բոլոր տեսակների դեպքում, եթե «Ապակենտրոնացված գրանցմատյանի կիրառման մասին տեղեկություն» դաշտում նշել է «Այո»: | hash |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 15. * | Ապակենտրոնացված գրանցամատյանի կիրառման մասին տեղեկություն | թիվ | 1 | Այո | Այո | Լրացվում է ապակենտրոնացված գրանցամատյանի կիրառման մասին տեղեկատվություն՝ ընտրելով Աղյուսակ 10 ցանկից: | blockchain |
| 16. | Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկություններ | տեքստ | մինչև 3000 | Այո | Այո | Լրացվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ ֆինանսական հաստատության կողմից կարևորվող այլ տեղեկություններ:<br>Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող հավելյալ տեղեկություններ, այդ թվում՝ առնվազն թվարկելով կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությանը կցվող համարակալված և բովանդակությանը համապատասխան անվանում ունեցող փաստաթղթերը: «Պայմանագրի տեսակները» դաշտում «Նվիրատվության պայմանագիր», «Փոխանակման պայմանագիր» կամ «Ժառանգություն» պայմանագրի տեսակներն ընտրելու դեպքում «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկություններ» դաշտում լրացվում է արժեթղթի շուկայական արժեքը: Արժեթղթի շուկայական արժեքը որոշվում է՝ հիմք ընդունելով հանրամատչելի տեղեկությունների հիման վրա տվյալ արժեթղթի համար առաջարկվող շուկայական արժեքը: | transaction_desc |
| 17.* | Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը | բաժին | | Այո | Այո | 28-րդ կետը ենթակա է պարտադիր լրացման «Տեսակը» դաշտում «Արժեթղթերի/բրոքերային հաշվի համալրում», «Արժեթղթերի/բրոքերային հաշվից ելքագրում» գործարքի տեսակներն ընտրելու դեպքում: 30-32-րդ կետը ենթակա է պարտադիր լրացման բոլոր տեսակի գործարքների կամ գործարար հարաբերությունների դեպքում, բացառությամբ «Տեսակը» դաշտում «Փոխառության տրամադրում», «Փոխառության մարում», «Արժեթղթերի/բրոքերային հաշվի համալրում», «Արժեթղթերի/բրոքերային հաշվից ելքագրում», «Արտառժույթի առք», «Արտառժույթի վաճառք», | transaction_type |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | «Արժույթային սվոփ», «Փոխարժեքային սվոփ», «Տոկոսադրույքային սվոփ» կամ «Արժեկտրոնի ստացում» ընտրելու դեպքում:<br>«Տեսակը» դաշտում «Ֆորվարդ գնման համաձայնությամբ»,<br>«Ֆորվարդ վաճառքի համաձայնությամբ»,<br>«Ֆյուչերս գնման համաձայնությամբ»,<br>«Ֆյուչերս վաճառքի համաձայնությամբ»,<br>«Օպցիոն գնման համաձայնությամբ» կամ<br>«Օպցիոն վաճառքի համաձայնությամբ» ընտրելու դեպքում 30-32-րդ կետերը ենթակա են պարտադիր լրացման, եթե դրանց հիմքում արժեթուղթ է: 33-րդ կետը ենթակա է պարտադիր լրացման բոլոր տեսակի գործարքների կամ գործարար հարաբերությունների դեպքում, բացառությամբ «Տեսակը» դաշտում «Փոխառության տրամադրում», «Փոխառության մարում», «Արժեթղթային/բրոքերային հաշվի համալրում», «Արժեթղթային/բրոքերային հաշվից ելքագրում», «Արտարժույթի առք», «Արտարժույթի վաճառք», «Ֆորվարդ գնման համաձայնությամբ», «Ֆորվարդ վաճառքի համաձայնությամբ», «Ֆյուչերս գնման համաձայնությամբ» կամ<br>«Ֆյուչերս վաճառքի համաձայնությամբ» ընտրելու դեպքում: | |
| 18. * | Տեսակը | թիվ | 6 | Այո | Այո | Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 5 ցանկից:<br>«Կրիպտոակտիվի առք արժույթով» գործարքի տեսակը ընտրվում է, երբ Հաճախորդը ֆինանսական հաստատությանը տրամարդում է արժույթ, որի դիմաց ֆինանսական հաստատությունը հաճախորդի հաշվին հասանելի է դարձնում կրիպտոակտիվ:<br>«Կրիպտոակտիվի վաճառք արժույթով» գործարքի տեսակը ընտրվում է, երբ հաճախորդը կրիպտոակտիվի դիմաց ստանում է արժույթ:<br>«Կրիպտոակտիվի առք արժույթով այլ անձի կողմից» և «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով այլ անձի օգտին» գործարքի տեսակներն ընտրվում են այն դեպքում, երբ կրիպտոակտիվի և արժույթի | transaction |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | համապատասխանաբար մուտքային կամ ելքային գործարքներն իրականացվում են միևնույն ֆինանսական հաստատության կողմից:<br>«Կրիպտոակտիվի առք արժույթով այլ անձի կողմից» տեսակը ընտրվում է այն դեպքում, երբ այլ անձի տրամադրած արժույթի դիմաց ֆինանսական հաստատությունը հաճախորդի հաշվին հասանելի է դարձնում կրիպտոակտիվ: «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով այլ անձի օգտին» գործարքի տեսակը ընտրվում է այն դեպքում, երբ հաճախորդը ֆինանսական հաստատությանը տրամադրում է կրիպտոակտիվ այլ անձի հաշվին արժույթ հասանելի դարձնելու համար:<br>«Կրիպտոակտիվի առք արժույթով», «Կրիպտոակտիվի առք արժույթով այլ անձի կողմից», ընտրելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա 20, 23, 25-26րդ կետերը: «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով», «Կրիպտոակտիվների վաճառք արժույթով այլ անձի օգտին» ընտրելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա 21, 22, 24, 27-րդ կետերը:<br>«Կրիպտոակտիվի փոխարկում կրիպտոակտիվի» ընտրելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա 20-23 կետերը:<br>«Պահառուական հաշիվների միջև փոխանցում» գործարքի տեսակը ընտրվում է այն դեպքում, երբ հաճախորդի և գործարքի մյուս կողմից հաշիվները սպասարկում է նույն ֆինանսական հաստատությունը:<br>«Այլ» նշելու դեպքում պարտադիր լրացման է ենթակա 19-րդ կետը: | |
| 19. | Այլ տեսակը | տեքստ | մինչև 1000 | Այո | Այո | Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության այլ տեսակը: | other_ transaction |
| 20. | Առքի գումարը | թիվ | մինչև 19 | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից գնված գումարը՝ արտահայտված գնման արժույթով: | buy_amount |
| 21. | Վաճառքի գումարը | թիվ | մինչև 19 | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից վաճառված գումարը՝ արտահայտված վաճառքի արժույթով: | sell_amount |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 22. | Առքի կրիպտոակտիվը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից գնված կրիպտոակտիվը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 2 ցանկից: | buy_cryptocurrency |
| 23. | Վաճառքի կրիպտոակտիվը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից վաճառված կրիպտոակտիվը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 2 ցանկից: | sell_cryptocurrency |
| 24. | Առքի կրիպտոակտիվի քանակը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից գնված կրիպտոակտիվի/կրիպտոակտիվների քանակը: | buy_quantity |
| 25. | Վաճառքի կրիպտոակտիվի քանակը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից վաճառված կրիպտոակտիվի/կրիպտոակտիվների քանակը: | sell_quantity |
| 26. | Առքի արժույթ | տեքստ | մինչև 3 | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից գնված արժույթը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 1 ցանկից: | buy_currency |
| 27. | Վաճառքի արժույթ | թիվ | մինչև | Այո | Այո | Լրացվում է ֆինանսական հաստատության կողմից վաճառված արժույթը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 1 ցանկից: | sell_currency |
| 28. | Պայմանագրի տեսակը | թիվ | 1 | Այո | Այո | Լրացվում է այն պայմանագիրը, որի հիման վրա կատարվել է գործարքը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 6 ցանկից: «Այլ» նշելու դեպքում պարտադիր լրացման է ենթակա 29-րդ կետը: | agreement_type |
| 29. | Պայմանագրի այլ տեսակի նկարագրություն | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է պայմանագրի այլ տեսակի նկարագրությունը: | other_agreement |
| 30. | Արժեթղթի տեսակը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է այն արժեթղթի տեսակը, որով կատարվել է գործարքը՝ ընտրելով Աղյուսակ 7 ցանկից: | security_type |
| 31. | Տարբերակիչ ծածկագիրը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է արժեթղթի միջազգային տարբերակիչ ծածկագիրը: | distinct_code |
| 32. | Թողարկողի անվանումը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է թողարկողի անվանումը այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում/ պետական գրանցման վկայականում: | issuer_name |
| 33. | Արժեթղթերի շուկայի տեսակը | տեքստ | մինչև 1000 | Այո | Այո | Լրացվում է արժեթղթերի շուկայի տեսակը՝ ընտրելով Աղյուսակ 8 ցանկից: | type of securities market |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 34. * | Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն | բաժին | | Այո | Ոչ | | suspicious |
| 35. * | Կասկածելի գործարքի չափանիշը կամ տիպաբանությունը | տեքստ | | Այո | Ոչ | Լրացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշ(ներ)ը կամ տիպաբանություն(ներ)ը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 9 ցանկից: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ լիազոր մարմնի հրապարակած ուղեցույցում կամ հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ»:<br>«Լիազոր մարմնի հրապարակած ուղեցույցով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն» ընտրելու դեպքում 36-րդ կետում լրացվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կասկածելիության չափանիշների վերաբերյալ» ուղեցույցի համապատասխան բաժինը և նկարագրությունը (օրինակ՝ 2. Հաճախորդի գործելակերպին և վարքագծին առնչվող կասկածելիության չափանիշներ», «2.1. Հաճախորդն առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում հաշվետվություն տրամադրող անձի ներքին կառավարման և հսկողության համակարգերի, քաղաքականությունների և ընթացակարգերի նկատմամբ»), և/կամ տիպաբանության հերթական համարը և անվանումը (օրինակ՝ «7. Թմրամիջոցներից ստացված միջոցները կրիպտոակտիվների կիրառմամբ օրինականացնելու վերաբերյալ»):<br>«Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն» ընտրելու դեպքում 36-րդ կետում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի համապատասխան իրավական ակտի դրույթի կամ տիպաբանության նկարագրությունը, հերթական համարը կամ անվանումը: | criterias<br><br>cr1<br>cr2<br>cr3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | «Այլ» նշելու դեպքում 37-րդ կետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության այլ հիմք(եր)ի հակիրճ՝ անվանման կամ վերնագրի նմանեցված բնութագիրը: | |
| 36. * | Չափանիշի կամ տիպաբանության նկարագրությունը | տեքստ | մինչև 1000 | Այո | Ոչ | Լրացվում է կասկածելի գործարքի չափանիշի կամ տիպաբանության նկարագրությունը: | other_cr |
| 37. * | Կասկածների նկարագրությունը | տեքստ | մինչև 3000 | Այո | Ոչ | Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը (վերլուծություն նախաձեռնելու առիթը և հանգամանքները, ժամկետը և ժամանակահատվածը, սուբյեկտների ամբողջական շրջանակը, ինչպես նաև կիրառված վերլուծական գործիքները և օգտագործված տեղեկատվական աղբյուրները), նկարագրվում է վերլուծության ընթացքը, այդ թվում՝ հաճախորդի ինքնությանը և կարգավիճակին, գործելակերպին և վարքագծին, գործարքի կամ գործարար հարաբերության բնույթին և տեսակին, գործարքում օգտագործվող պրոդուկտին կամ գործարքի կատարման եղանակին վերաբերող փաստերը և դեպքերը և բոլոր այն հանգամանքները, որոնք վերլուծության ընթացում հաշվետվություն տրամադրող անձը որակել է որպես կասկածելի: Այս դաշտում կարող են նկարագրվել նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները: | doubt_description |
| 38. | Ապակենտրոնացված գրանցամատյանի հասցեին վերագրելի ռիսկը | | | Այո | Ոչ | Ապակենտրոնացված գրանցամատյանի հասցեին վերագրելի ռիսկի վերաբերյալ կրիպտոակտիվով ծառայություններ մատուցող անձին հասանելի տվյալները ենթակա են պարտադիր լրացման: | susp_risk |
| 39. | Ներգրավված անձինք | տեքստ | մինչև 3000 | Այո | Ոչ | Լրացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մեջ ներգրավված գործարքի կողմ չհանդիսացող այլ անձանց տվյալները (անուն, ազգանուն, անձնագրային տվյալները՝ առկայության դեպքում), ինչպես նաև այդ անձանց վերաբերյալ ֆինանսական հաստատությանը հայտնի այլ տեղեկատվությունը: | rel_persons |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 40. | Կապված հաշվետվությունը | տեքստ | մինչև 25 | Այո | Ոչ | Լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը՝ «Հաշվառման համարը»-«Հաշվետվության ուղարկման ամսաթիվը»-«Հաշվետվության հերթական համարը»-«Ուղղման (լրացման) հերթական համարը»: Ենթակա է պարտադիր լրացման, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ ֆինանսական հաստատության, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է ֆինանսական հաստատության կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: | rel_report |
| 41. * | Տիրապետում է իրական շահառուի մասին տեղեկատվությանը | թիվ | 1 | Այո | Ոչ | Լրացվում է հաշվետու անձի կողմից իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետելու փաստը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 10 ցանկից:<br>Լրացվում է «Ոչ», եթե տեղի է ունեցել գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձ, երբ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ: Այս դեպքում 46-րդ կետում «Իրական շահառու» գործարքի կողմը չի լրացվում: | ben_no |
| 42. * | Գործարքի կողմերը | բաժին | | Այո | Այո | Լրացվում է հաճախորդի, գործարքի մյուս կողմի, լիազորված անձի և իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 11 ցանկից:<br><br>«Հաճախորդ» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման բոլոր գործարքների դեպքում: «Հաճախորդ»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 44, 47-70 կետերով սահմանված կարգով<br>«Կրիպտոակտիվովի առք արժույթով այլ անձի համար», «Կրիպտոակտիվի վաճառք արժույթով այլ անձի օգտին» դաշտերը նշելու դեպքում «Հաճախորդ» դաշտում նշվում է այն անձը, ում հաշվին կատարվում է կրիպտոակտիվի մուտք կամ ում հաշվից | side_section |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կատարվում է կրիպտոակտիվի ելք, իսկ հաշվին մուտք կամ հաշվից ելք իրականացնող անձը նշվում է «Գործարքի մյուս կողմ» դաշտում:<br>«Գործարքի մյուս կողմ» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում «Կրիպտոակտիվների փոխանցում», «Կրիպտոակտիվների ստացում», «Կրիպտոակտիվի փոխարկում կրիպտոակտիվի», «Կրիպտոակտիվի առք արժույթով այլ անձի կողմից» «Կրիպտոակտիվով վաճառք այլ անձի օգտին», «Կրիպտոակտիվի առք և վաճառք հաճախորդի հաշվին», «Պահառուական հաշիվների միջև փոխանցում», «Կրիպտոակտիվի ստացում», , «Արժեթղթերի ձեռքբերում», «Արժեթղթերի օտարում», «Ռեպո», «Հակադարձ ռեպո», «Ֆորվարդ գնման համաձայնությամբ», «Ֆորվարդ վաճառքի համաձայնությամբ», «Օպցիոն գնման համաձայնությամբ», «Օպցիոն վաճառքի համաձայնությամբ», «Արժույթային սվոփ», «Փոխարժեքային սվոփ», «Տոկոսադրույքային սվոփ», «Արժեկտրոնի ստացում» նշելու դեպքում:<br>«Գործարքի մյուս կողմ»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 44, 47-70 կետերով սահմանված կարգով: Ընդ որում, պարտադիր լրացման են ենթակա 44,47,48 կետերը: Եթե կրիպտոակտիվով գործարքը կատարվել է թողարկողի հետ, «Գործարքի մյուս կողմ»-ի վերաբերյալ տվյալներում լրացվում են թողարկողի տվյալները:<br>Եթե արժեթղթերի շուկայի տեսակը դաշտում նշվել է «Կարգավորվող», «Գործարքի մյուս կողմ»-ի վերաբերյալ տվյալներից պարտադիր լրացման են ենթակա այն տեղեկությունները, որոնք հասանելի են հաշվետվություն տրամադրող անձին:<br>Գործարքի կողմերի՝ ներդրումային ֆոնդ և ներդրումային ֆոնդի փայամասնակից լինելու դեպքում, «Հաճախորդ» դաշտում լրացվում են ներդրումային ֆոնդի վերաբերյալ տվյալները: Ներդրումային պայմանագրային ֆոնդի դեպքում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | «Հաճախորդ» դաշտում պարտադիր լրացման են ենթակա 47-րդ և 58-րդ կետերը, իսկ 70-րդ կետում լրացվում են ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձի վերաբերյալ տվյալները: Գործարքի կողմերի՝ ներդրումային ֆոնդ և ներդրումային ֆոնդի փայամասնակից լինելու դեպքում «Գործարքի մյուս կողմ դաշտում» լրացվում են ներդրումային ֆոնդի փայամասնակցի վերաբերյալ տվյալները:«Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում «Այլ» նշելու դեպքում, եթե գործարքը ունի երկու կողմ «Գործարքի մյուս կողմ» գործարքի կողմի վերաբերյալ տվյալները ենթակա են պարտադիր լրացման:<br>«Լիազորված անձ» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման իրավաբանական անձ, պետական մարմին կամ համայնք հաճախորդի դեպքում, ինչպես նաև ֆիզիկական անձ հաճախորդի դեպքում գործարքը կամ գործարար հարաբերությունը լիազորված անձի միջոցով կատարվելու պարագայում: «Լիազորված անձ»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 44, 45, 47-70 կետերով սահմանված կարգով:<br>«Իրական շահառու» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության դեպքում:<br>«Իրական շահառու»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 44, 46-65 կետերով սահմանված կարգով: | |
| 43.* | Գործարքի կողմը | թիվ | 1 | Այո | Այո | Լրացվում է գործարքի կողմը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 11 ցանկից: | side_type |
| 44.* | Գործարքի կողմի տեսակը | թիվ | 1 | Այո | Այո | Լրացվում է գործարքի կողմի տեսակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 12 ցանկից, իսկ լիազորված անձի դեպքում՝ սույն հավելվածի Աղյուսակ 13 ցանկից: | side_subtype |
| 45. | Լիազորող անձ | թիվ | 1-ից մինչև հաճա | Այո | Այո | Լրացվում է այն հաճախորդի ծրագրային հղման համարը, ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը: | auth_clients |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | խորդների առավել լագույն քանակը | | | | |
| 46.* | Իրական շահառուի վերաբերյալ տեղեկություններ | տեքստ | մինչև 3000 | Այո | Ոչ | Լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության, գործարքի կողմերի և իրական շահառուի միջև առկա կապի վերաբերյալ մանրամասները: | ben_information |
| 47.* | Անուն (անվանում) | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը: Ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը լրացվում է այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում/ պետական գրանցման վկայականում: | first_name |
| 48. | Ազգանունը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը՝ 47-րդ կետում նշված կարգով: Ենթակա է պարտադիր լրացման «Գործարքի կողմի տեսակը» դաշտում ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր ընտրելու դեպքում: | last_name |
| 49. | Հայրանունը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը՝ 47-րդ կետում նշված կարգով: | family_name |
| 50. | Ծննդյան ամսաթիվը | ամսաթիվ | 10 | Այո | Այո | Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան տարին՝ 4-նիշ, ամիսը՝ 2-նիշ, օրը՝ 2-նիշ (yyyy-mm-dd): | dob |
| 51. | Բնակության վայր (գտնվելու վայր) | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը)<br>Պետական մարմնի կամ համայնքի դեպքում լրացվում է պետական մարմնի կամ համայնքի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը) | address |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 52. | Բնակության քաղաքը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն քաղաքը կամ գյուղը, որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի քաղաքը կամ գյուղը<br>Պետական մարմնի կամ համայնքի դեպքում լրացվում է պետական մարմնի կամ համայնքի գտնվելու վայրի քաղաքը կամ գյուղը | city |
| 53. | Բնակության մարզը | տեքստ | մինչև 256 | Այո | Այո | Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն մարզը, որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի մարզը:<br>Պետական մարմնի կամ համայնքի դեպքում լրացվում է պետական մարմնի կամ համայնքի գտնվելու վայրի մարզը: | region |
